



Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ)

Ամսաթիվ՝ 02 հուլիսի 2015թ.

Վարկի համար՝ 2993-ARM, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3

Պայմանագրի համարը և անունը՝ N03-IC-003-Պայմանագրերի/FIDIC-ի գծով Պահանջների կառավարման փորձագետ

Հայտի ներկայացման վերջնաժամկետ՝ 14 հուլիսի 2015թ.

հատուկ ֆոնդի միջոցներից՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման համար, և մտադիր է գումարի մի մասը հատկացնել N 03-IC-003 պայմանագրով նախատեսված համապատասխան վճարումները կատարելու համար:

Պայմանագրի պայմանները, ժամկետները և ԱԶԲ-ի կողմից վճարումները կկատարվեն Վարկային համաձայնագրի պայմաններին և «ԱԶԲ-ի և իր վարկառուների կողմից խորհրդատուների վարձման» ուղեցույցերի համաձայն:

Բացառությամբ ԱԶԲ-ի կողմից հատուկ համաձայնության դեպքերի, ոչ մի այլ երրորդ կողմ, բացի ՀՀ կառավարությունից, վարկի գումարի նկատմամբ չի կարող որևէ իրավունք ունենալ կամ պահանջ ներկայացնել:

Պայմանագրերի/FIDIC-ի գծով Պահանջների կառավարման փորձագետ՝

Իրականացնող Կազմակերպությունը կվարձի միջազգային անհատ-խորհրդատուի, ով պետք է ունենա Բակալավրի աստիճան Շինարարության կամ Իրավագիտության ցանկացած ոլորտում՝ նախընտրելի է 15 տարվա աշխատանքային փորձով, Մագիստրոսի աստիճանը և ավելի քան 15 տարվա աշխատանքային փորձը կլինի առավելություն: Պայմանագրերի/FIDIC-ի գծով Պահանջների կառավարման փորձագետը պետք է լինի փորձառու մասնագետ շինարարության ոլորտում՝ նախընտրելի է 10 տարվա աշխատանքային փորձով միջազգային (իր ծագման երկրից դուրս) շինարարական պայմանագրերի հետ: Նա պետք է լինի FIDIC պայմանագրերի գծով վեճերի դատավոր՝ հավատարմագրված հենց FIDIC-ի կամ FIDIC-ի անդամ ասոցացիաների կողմից: Նա պետք է ազատ տիրապետի անգլերենին:

Պայմանագրերի/FIDIC-ի գծով Պահանջների կառավարման փորձագետի ինքնակենսագրականը պետք է պարունակի տեղեկատվություն վերջին 5 տարիների

ընթացքում նրա կողմից հաջողությամբ կատարված առաջադրանքների վերաբերյալ, որոնք առնչվում են նմանատիպ վեճերին՝ ներառելով Պատվիրատուների անվանումների, հասցեների և հետադարձ կապի վերաբերյալ տեղեկատվություն: Պայմանագրերի/FIDIC-ի գծով Պահանջների կառավարման փորձագետը պետք է տրամադրի նվազագույնը 2 գրություն, որոնք կհավաստեն նրա կողմից վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ վեճերի հետ կապված առաջադրանքների հաջող կատարման մասին: Գործատուն կարող է պատահականության սկզբունքով կապ հաստատել Պատվիրատուների հետ մինչև Պայմանագրի կնքումը՝ հավաստիանալու Խորհրդատուի կողմից ներկայացված տեղեկատվության մեջ:

Պայմանագրերի/ FIDIC-ի գծով Պահանջների կառավարման փորձագետի հիմնական գործառույթները ներառում են հետևյալը՝

1. Գնահատել պայմանագրի ընթացիկ կարգավիճակը կապված պահանջների և վեճերի առարկա հանդիսացող խնդիրների հետ՝ դրանցից յուրաքանչյուրի հիմքերի, ակնկալող արդյունքի և ուժեղ ու թույլ կողմերի վերաբերյալ ողջամիտ պայմանագրային տեսակետ ունենալու համար և ներկայացնել հաշվետվություն Գործատուին,

2. Պատրաստել և Գործատուի նախնական հաստատման պարագայում Վեճերի կարգավորման խորհրդին ներկայացնել Գործատուի կողմից ներկայացվող բոլոր փաստաթղթերը, անկախ այն հանգամանքից դրանք Գործատուի Պահանջների համար բացված վարույթի հետ կապված հաշվետվություններ են կամ Կապալառուի Հաշվետվություններին/Ֆայլերին կամ Վեճերի կարգավորման խորհրդի հարցումներին պատասխան: Մասնավորապես՝

ա) Պատրաստել Գործատուի կողմից ներկայացվող փաստաթղթերը, ստանալ Գործատուի հաստատումները և (կամ) հնարավոր մեկնաբանությունները, և Վեճերի կարգավորման խորհրդին ներկայացնել համապատասխան վերջնական տարբերակը,

բ) Համագործակցել Գործատուի և Ծրագրի Կառավարման Խորհրդատու (ԾԿԽ)/Ինժեների համապատասխան աշխատակազմի և առնչվող համարվող ցանկացած այլ անձանց հետ՝ հասկանալու և պարզելու համար յուրաքանչյուր վեճի առարկայի փաստացի և բացահայտ հիմնավորումները,

գ) Անհրաժեշտության դեպքում մասնակցել Վեճերի կարգավորման խորհրդի լուսմներին և ներկայացնել ու պաշտպանել Գործատուի կողմից ներկայացվող փաստաթղթերը այսպիսի լուսմներում,

3. Համագործակցել մյուսների հետ, հաճախել հանդիպումներին, Գործատուի համար պատրաստել արձանագրություններ, կարծիքներ և եզրակացություններ, և Գործատուի պահանջի կամ հաստատման դեպքում իրականացնել ցանկացած այլ գործառույթ առաջադրանքի նպատակներն իրագործելու համար,

4. Մանրամասն վերանայել ԾԿԽ/Ինժեների հետ կնքված Պայմանագիրը և ԾԿԽ/Ինժեների պարտավորությունները, և Գործատուին տրամադրել եզրակացություններ ԾԿԽ/Ինժեների կողմից իր պայմանագրային պարտավորությունների և FIDIC պայմանագրի պահանջները խախտելու վերաբերյալ,

5. Առաջին կետում ներկայացված առաջադրանքի հիման վրա պատրաստել Գործատուի Պահանջները:

Ընտրության եղանակը՝	Անհատ խորհրդատուի ընտրություն (ICS)
Պայմանագրի տեսակը՝	Ժամանակի վրա հիմնված
Նախատեսված բյուջեն՝	105,000.00 (հարյուր հինգ հազար) ԱՄՆ դոլար (առանց հարկերի)
Պահանջվող ներգրավվածությունը՝	Հավանական 25 մարդ-օր (21 օր Դաշտում, 4 օր Գլխավոր Գրասենյակում)
Առաջադրանքի իրականացման տևողությունը՝	6 ամիս
Աշխատանքների ակնկալվող մեկնարկը՝	օգոստոս 2015թ.
Աշխատանքների ակնկալվող ավարտը՝	փետրվար 2016թ.
Խորհրդատուի տեսակ՝	Միջազգային անհատ-խորհրդատու

Հայտերի ներկայացում

Հետաքրքրվող մասնակիցները կարող են ներբեռնել հետաքրքրության հայտի, ինքնակենսագրականի ձևերը և ցանկացած այլ առնչվող տեղեկատվություն (անվճար) ԱԶԲ-ի պաշտոնական կայքից www.adb.org. Հետաքրքրության հայտի և ինքնակենսագրականի ձևերը մասնակիցները կարող են ձեռք բերել նաև abrahamyank@northsouth.am և amirkhanyane@northsouth.am էլեկտրոնային հասցեներին ուղարկելով էլեկտրոնային նամակներ:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ <http://www.cms.adb.org> ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի միջոցով, ոչ ուշ, քան 14 հուլիսի 2015թ.:

Կազմակերպության անվանումը՝	«Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ
Հասցեն՝ Հեռախոս՝	ՀՀ, ք. Երևան 0002, Պուշկինի 58 +374-60-50-68-70 (-71)
Հարցերի համար դիմել՝	Կարինե Աբրահամյան, Էռնա Ամիրխանյան
Էլեկտրոնային հասցե՝	abrahamyank@northsouth.am , amirkhanyane@northsouth.am